

Պ-334-23.09.2013,27.09.2013-S<-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի ՀՕ-55-Ն ՕՐԵՆՔԸ ՉԵՂՑԱԼ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2010թ. ապրիլի 27-ի Հայաստանի Հանրապետության 2012թ. դեկտեմբերի 6-ի ՀՕ-232-Ն ՀՕ-55-Ն օրենքը չեղյալ ճանաչելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» /այսուհետ՝ Օրենք/ ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 14.2-րդ և 14.3-րդ կետերը, 14.3.1, 14.3.2-րդ, 14.3.3-րդ, 14.3.4-րդ ենթակետերը, ինչպես նաև 2-րդ և 3-րդ հոդվածները չեղյալ ճանաչել :

Հոդված 2. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի «14. Վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

14.2 քաղաքային համայնքների վարչական սահմաններից դուրս (բացառությամբ՝ Երևան քաղաքի և Երևանից «Զվարթնոց» օդանավակայան տանող ճանապարհատվածի (Վաղարշապատի խճուղու և օդանավակայանի ճանապարհների երթևեկելի մասերի) յուրաքանչյուր վայրում մեքենայացված շահումներով խաղերի կազմակերպման համար՝ տարեկան 14.3 շահումներով խաղերի

400000-ապատիկի չափով

կազմակերպման համար, այդ թվում՝

14.3.1 յուրաքանչյուր վայրում՝ տարեկան	բազային տուրքի 2850000-ապատիկի չափով
14.3.2 Ծաղկաձոր քաղաքում՝ տարեկան	բազային տուրքի 150000-ապատիկի չափով
14.3.3 Սևան քաղաքում՝ տարեկան	բազային տուրքի 120000-ապատիկի չափով
14.3.4 Ջերմուկ քաղաքում՝ տարեկան	բազային տուրքի 80000-ապատիկի չափով
14.3.5 Մեղրի քաղաքում՝ տարեկան	բազային տուրքի 30000-ապատիկի չափով

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 19-րդ հոդվածի «18. Գործունեության այլ բնագավառներ» բաժնի վերջին պարբերությունը:

Հոդված 4. Օրենքի 32-րդ հոդվածի վերջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Օրենքի 19-րդ հոդվածի 14-րդ բաժնի 14.2-րդ, ինչպես նաև 14.3.1-14.3.5-րդ կետերով սահմանված պետական տուրքի տարեկան գումարի մեկ քառորդ մասը պետական բյուջե է վճարվում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակի սկզբին նախորդող ամսվա 25-ը ներառյալ, բացառությամբ լիցենզիայի տրման համար վճարվող առաջին պետական տուրքի, որի վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հետևյալ չափով՝ օրենքի 19-րդ հոդվածի 14-րդ բաժնի 14.2-րդ, ինչպես նաև 14.3.1-14.3.5-րդ կետերով սահմանված պետական տուրքի տարեկան գումարի մեկ տասներկուերորդի և լիցենզիայի տրման ամսվանից մինչև տվյալ եռամսյակի վերջին ամիսն ընկած ժամանակահատվածում ներառված, այդ թվում՝ ոչ ամբողջական, ամիսների թվի արտադրյալով:»:

Հոդված 5. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում գործունեության տեսակների համար սահմանված

պետական տուրքի դրույքաչափերը ենթակա չեն փոփոխության սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում:

ԱՍՓՈՓԱԹԵՐԹ

Առաջարկություն	Առաջարկության հեղինակ	Առաջարկության վերաբերյալ եզրակացություն
<p>Ավելացնել նոր հոդված 1 հետևյալ բովանդակությամբ՝ Հոդված 1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2010թ. ապրիլի 27-ի Հայաստանի Հանրապետության 2012թ. դեկտեմբերի 6-ի ՀՕ-232-Ն ՀՕ-55-Ն օրենքը չեղյալ ճանաչելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» /այսուհետ՝ Օրենք/ ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 14.2-րդ և 14.3-րդ կետերը, 14.3.1, 14.3.2-րդ, 14.3.3-րդ, 14.3.4-րդ ենթակետերը, ինչպես նաև 2-րդ և 3-րդ հոդվածները չեղյալ ճանաչել :</p>	Վարդան Այվազյան	Ընդունվել է
<p>Հոդված 1-ը դարձնել հոդված 2 և խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ Հոդված 2. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի «14. Վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>14.3 քաղաքային համայնքների վարչական սահմաններից դուրս (բացառությամբ՝ Երևան քաղաքի և Երևանից «Ձվարթնոց» օդանավակայան տանող ճանապարհատվածի (Վաղարշապատի խճուղու և օդանավակայանի ճանապարհների երթևեկելի մասերի) յուրաքանչյուր վայրում մեքենայացված շահումներով խաղերի կազմակերպման համար՝ տարեկան չափով 400000-ապատիկի</p> <p>14.3 շահումներով խաղերի կազմակերպման համար, այդ թվում՝</p> <p>14.3.1 յուրաքանչյուր վայրում՝ տարեկան բազային տուրքի 2850000-ապատիկի չափով</p> <p>14.3.2 Ծաղկաձոր քաղաքում՝ տարեկան բազային տուրքի 150000-ապատիկի չափով</p> <p>14.3.3 Սևան քաղաքում՝ տարեկան բազային տուրքի 120000-ապատիկի չափով</p> <p>14.3.4 Ջերմուկ քաղաքում՝ տարեկան բազային տուրքի 80000-ապատիկի չափով</p> <p>14.3.5 Մեղրի քաղաքում՝ տարեկան բազային տուրքի 30000-ապատիկի չափով</p>	Վարդան Այվազյան	Ընդունվել է

<p>Հոդված 2-րդը դարձնել հոդված 3-րդ և խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 19-րդ հոդվածի «18. Գործունեության այլ բնագավառներ» բաժնի վերջին պարբերությունը:</p>	Վարդան Այվազյան	Ընդունվել է
<p>Ավելացնել նոր 4-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>Հոդված 4. Օրենքի 32-րդ հոդվածի վերջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Օրենքի 19-րդ հոդվածի 14-րդ բաժնի 14.2-րդ, ինչպես նաև 14.3.1-14.3.5-րդ կետերով սահմանված պետական տուրքի տարեկան գումարի մեկ քառորդ մասը պետական բյուջե է վճարվում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակի սկզբին նախորդող ամսվա 25-ը ներառյալ, բացառությամբ լիցենզիայի տրման համար վճարվող առաջին պետական տուրքի, որի վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հետևյալ չափով՝ օրենքի 19-րդ հոդվածի 14-րդ բաժնի 14.2-րդ, ինչպես նաև 14.3.1-14.3.5-րդ կետերով սահմանված պետական տուրքի տարեկան գումարի մեկ տասներկուերորդի և լիցենզիայի տրման ամսվանից մինչև տվյալ եռամսյակի վերջին ամիսն ընկած ժամանակահատվածում ներառված, այդ թվում՝ ոչ ամբողջական, ամիսների թվի արտադրյալով:»:</p>	Վարդան Այվազյան	Ընդունվել է
<p>Հոդված 3-րդը դարձնել հոդված 5 և խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>Հոդված 5. Անցումային դրույթներ</p> <p>1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում գործունեության տեսակների համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերը ենթակա չեն փոփոխության սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում:</p>	Վարդան Այվազյան	Ընդունվել է
<p>Ավելացնել նոր նախագիծ «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին»</p>	Վարդան Այվազյան	Ընդունվել է